ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՀԱԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Վահագնաձոր Հեռ. 093-014-292
էլ. փոստ *vahagnadzor*.lori@mta.gov.am

26-41

« 31 » Մայիսի 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Պ-ն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Վահագնաձոր համայնքի ավագանու 2017թվականի մայիսի 31-ի թիվ 09-Ա որոշումը:

Առդիր 2 թերթ

ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ԵՂՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Վահագնաձոր Հեռ. 093-014-292
էլ. փոստ *vahagnadzor*.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«31» Մայիսի 2017 թվականի N 09-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2017 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 2017թվականի հունիսի 05-ին իմ ղեկավարությամբ Լոռու մարզի Վահագնաձոր համայնքում անց է կացվելու շտաբային ուսումնավարժություն «Անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում և իրականացում» թեմայով:

Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Նշանակել՝

1.1. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ համայնքի ղեկավար Էդիկ Եղոյան:

Շտաբը կազմավորել համայնքի ծառայությունների բազայի վրա:

2. Ուսումնավարժությունում ընդգրկել համայնքի ղեկավար կազմին, համայնքային կապի և ազդարարման, բժշկական ծառայությունները:

3. ՔՊ շտաբի պետին.

-մշակել և մինչև մայիսի 25-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը.

- համայնքային ծառայությունների ու կազմավորումների ղեկավարների հետ անցկացնել տեսական պարապմունքներ, շտաբային վարժանքներ.
- ուսումնավարժության անցկացման ընթացքում ապահովել իրավիճակի մասին տեղեկությունների ժամանակին ընդունումը, ամփոփումը, գնահատումն ու շահագրգիռ մարմիններին հասցնումը.
- նախապատրաստել ղեկավարման կետը.
- ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին ինձ զեկուցել մինչև մայիսի 29-ը:

4. Համայնքային ծառայությունների պետերին.

1) ուսումնասիրել և ճշգրտել ծառայությունների պլաններն ու խնդիրները: Ակտիվորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

2) կապի ծառայության պետ Թամարա Եղոյային՝ ապահովել կայուն և անխափան կապ ծառայությունների ու արձագանքող ուժերի հետ:

4) բժշկական ծառայության պետ Նաիրա Թամազյանին՝ ճշգրտել ծառայության խնդիրներն ու դրանց լուծման կարգը.

5. Ուսումնավարժության ղեկավարումն իրականացնել համայնքի աշխատակազմի շենքից:

6. Ուսումնավարժությունների անցկացման հսկողությունը թողնում եմ ինձ վրա:

ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ԵՂՈՅԱՆ

2017թ.մայիսի31

հ. Վահագնաձոր